ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(*ՈԱԱԿ-ի մշակած մոտեցումներ՝ առաջնորդող գաղափարներ*)

Նախաբան

Գլոբալացման արդյունքում մասնագիտական կրթությունը կորցրել է իր էլիտար բնույթը՝ հասանելի դառնալով ավելի լայն զանգվածների: Մասնագիտական կրթության համակարգն այսօր կոչված է պատրաստելու փոխանցելի գիտելիքով, հմտություններով և կարողություններով օժտված մասնագետներ, ովքեր ի վիճակի կլինեն գործունեություն ծավալել հարափոփոխ միջավայրում: Երկրի տնտեսության զարգացման գործում որակյալ կրթության դերը երբևէ այսքան չի կարևորվել:

Կրթական գործընթացի որակի հիմնական պատասխանատուն և ապահովողը ուսումնական հաստատություններն են: «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամն իր հերթին՝ կիրառելով որակի հավաստման տարբեր մոտեցումներ, պատասխանատվության իր մասն է ստանձնել Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության որակն ապահովելու և բարելավելու գործում: Կենտրոնի մշակած որակի ապահովման նոր շրջանակի առանցքն է հանդիսանում մասնագիտական կրթական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգը: Որակի արտաքին ապահովման ընթացակարգերը հենվում են որակի ներքին ապահովման գործընթացների վրա և պարբերաբար իրականացվելու շնորհիվ զարգացնում դրանք: Մասնագիտական կրթության որակի ապահովմանն ուղղված ընթացակարգերն իրականացնելու հետ մեկտեղ՝ Որակի կենտրոնը պատասխանատվություն է կրում նաև համապատասխան և պարբերաբար նորացվող տեղեկատվություն տրամադրելու և որակի ապահովման գործընթացները խթանող ռեսուրսներ ապահովելու համար:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀՂՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Որակավորումների ազգային շրջանակը

Հայաստանում մշակվող որակավորումների ազգային շրջանակը որակավորումների բազմամակարդակ մի համակարգ է, որը պետք է օգտագործվի Հայաստանում շնորհվող որակավորումները նկարագրելու համար: Այն տեղեկատվություն է տալու կրթական համակարգի յուրաքանչյուր շրջափուլի, ինչպես նաև ամեն մի շրջափուլին համապատասխանող որակավորումների և շնորհվող աստիճանների մասին: Շրջանակի սահմանած մակարդակների շնորհիվ որակավորումները կճանաչվեն ազգային և միջազգային մակարդակներում: Այն հնարավորություն է տալու ուսանողներին, համեմատելով տարբեր մակարդակներին համապատասխանող որակավորումները, գնահատել իրենց ապագա առաջընթացի հնարավոր հեռանկարները և որոշել, թե ինչպիսի՞ որակավորումներ են իրենք ցանկանում ձեռք բերել: Որակավորումների հավատարմագրումը հավաստում է, որ դրանք բարձորակ են և բավա-

բարում են բոլոր շահեկիցների պահանջները: Հավատարմագրված բոլոր որակավորումները շնորհվելու են որակավորումների շրջանակի սահմանած մակարդակների հիման վրա:

Հայաստանի որակավորումների ազգային շրջանակը նախատեսում է սահմանել կրթական 8 մակարդակ: Յուրաքանչյուր մակարդակ պետք է հենվի ձեռք բերվող գիտելիքի, հմտությունների ու կարողությունների համաձայնեցված չափորոշիչների վրա, որոնք սահմանում են, թե ուսումնառության տվյալ շրջափուլի հաջող ավարտին ի՛նչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել շրջանավարտը:

Որակավորումների ազգային շրջանակի նպատակն է դյուրացնել մուտքը դեպի կրթական և վերապատրաստման կառույցներ, ապահովել դրանց փոխկապակցվածությունը, ինչպես նաև նպաստել սովորողների շարժին և առաջխաղացմանը թե՛ կրթական, թե՛ վերապատրաստման գործընթացներում: Որակավորումների շրջանակը հնարավորություն է ընձեռում նաև ճանաչել արտերկրում ստացած որակավորումները:

Որակի ապահովումն ազգային շրջանակի սահմանած որակավորումների ճանաչման գործընթացների հիմնական առանցքն է, և հենց Որակի կենտրոնի վրա է դրված կրթական ծրագրերի որակը հավաստելու և այզգային ու Եվրոպական որակավորումների շրջանակների (ԵՈՇ) որակավորումների համապատասխանությունն ապահովելու պատասխանատվությունը:

Որակավորումների սեկտորիալ շրջանակը

Վերջին տարիներին բարձրացվում և կարևորում է նաև *որակավորումների,* այսպես կոչված, *սեկտորիալ շրջանակի* դերը: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ անհրաժեշտություն է առաջացել տեսանելի ու ընկալելի դարձնել կրթական համակարգի տարբեր սեկտորների և անգամ առանձին կրթական հաստատությունների կողմից շնորհվող որակավորումները և փոխվստահություն առաջացնել ազգային և եվրոպական համակարգերի միջև: Բացի դրանից, անհրաժեշտություն է առաջացել ապահովել այդ որակավորումների համադրելիությունն ու համընթեռնելիությունն ազգային և եվրոպական շրջանակների սահմանած որակավորումների հետ: Որակավորումների սեկտորիալ շրջանակը սահմանում է ընդհանրական վերջնարդյունքների տերմիններով արտահայտված որակավորումների այն առաձնահատկությունները, որոնք առաջարկվում են առանձին հաստատությունների և մասնագիտական միությունների կողմից: Կրթական հաստատության ռազմավարությունը պետք է այն դիտարկի որպես կողմնորոշիչ շրջանակ ու համապատասխանի դրան:

Որակի ապահովման չափորոշիչները

Կրթական ծրագրերի չափորոշիչներ ստեղծելու փոխարեն իրականացվում է այդ ծրագրերի համադրական վերլուծություն, դրա արդյունքում սահմանվում է ուսումնառության թույլատրելի նվազագույն շեմը, որն ընդունելի է բոլոր շահեկիցների՝ Կառավարության, ակադեմիական հանրության և մասնագիտական ընկերակցությունների, գործատուների միությունների և հասարակության համար: Մասնագիտական կողմնորոշիչներն, իրենց հերթին, սահմանում են տվյալ մասնագիտական ոլորտին վերաբերող նվազագույն չափորոշիչներ: Դրանք կազմում են հայեցակարգային մի շրջանակ, որը թույլ է տալիս պահպանել որևէ մասնագիտության տրամաբանական հիմնավորվածությունն ու ինքնությունը՝ միևնույն ժամանակ սահմանելով, թե շրջանավարտից ինչպիսի՛ հմտություններ են պահանջվում՝ տվյալ մասնագիտության իմացությունը զարգացնելու համար: Ըստ էության, դրանք արտահայտում են ակադեմիական որևէ ոլորտում համանման որակավորման նկատմամբ սահմանված համընդհանուր նվազագույն շեմերը:

Համադրական վերլուծությունն անընդհատ զարգացող գործընթաց է: Որակի կենտրոնը՝ նախքան որակի ապահովման ընթացակարգի նախաձեռնումը, պարբերաբար կատարում է այդօրինակ փորձաքննություն՝ ներգրավելով թե՛ ակադեմիական հանրության ներկայացուցիչների և թե՛ տվյալ բնագավառի՝ ՈԱԱԿ-ի կողմից հրավիրվող փորձագետների: Բացի դրանից, մշակվող չափորոշիչների գործնական կիրառելիությունն ապահովելու նպատակով կարևորվում է մասնագիտական ընկերակցությունների և մասնագիտական այլ կազմակերպությունների մասնակցությունը գործընթացին:

Ուսանողների գնահատման ազգային համակարգը

Գլոբալացման, ինչպես նաև մասնագիտական կրթության ոլորտի բազմազանեցման արդյունքում առաջացել և տարբեր հաստատություններում կիրառվում են ուսանողների գնահատման մի շարք համակարգեր: Որպես հաստատությունների ինքնավարության վկայություն՝ այդ իրողությունը խնդրահարույց է դարձնում ուսանողներին տրվող վկայականների (դիպլոմների) ընթեռնելիությունը և համադրելիությունը: Այդ խնդիրը լուծելու, ինչպես նաև միջազգային ու ազգային մակարդակներում ուսանողների շարժունությունն ապահովելու համար հույժ կարևոր է դառնում գնահատման առկա տարբեր համակարգերը միմյանց համաձայնեցնելու խնդիրը՝ այդ նպատակով ստեղծելով Ուսանողների գնահատման ազգային շրջանակ, որը հնարավորություն կընձեռի համապատասխանեցնել՝

- գնահատման տարբեր համակարգերը,
- ուսանողների գնահատման տեսակները,
- գնահատման մեթոդներն և նրանց կապը ուսումնառության արդյունքների հետ:

Կրեդիտային ազգային համակարգը

Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS), ինչպես հայտնի է՝ կրեդիտների կուտակման և փոխանցման ուսանողակենտրոն մի համակարգ է, որը հիմնված է ուսումնառության արդյունքների և կրթական գործընթացների թափանցիկության վրա: Այն նպատակ ունի պլանավորելու, ներկայացնելու, գնահատելու, ճանաչելու և վավերացնելու որակավորումները և կրթական ծրագրի առանձին հատվածները, ինչպես նաև դյուրացնելու ուսանողների շարժունությունը: ECTS համակարգը լայնորեն կիրառվում է մասնագիտական կրթության ոլորտում: Հայաստանի Հանրապետությունում կրեդիտների բաշխման տարբեր մոտեցումները կարգավորվում են կրեդիտային ազգային համակարգի շրջանակներում:

Պետք է նկատի ունենալ, որ ուսանողների շարժունությունը կարող են ապահովել միայն հավատարմագրված կրթական ծրագրերի շնորհած կրեդիտները:

Որակի շրջանակը

Մասնագիտական կրթության որակի շրջանակը Որակի կենտրոնի մշակած մի միջոց է, որը թույլ է տալիս ուսումնառության միջավայրի պարբերական վերլուծություններ կատարել՝ կրթական գործընթացների որակի տեսանկյունից դիտարկելով ներկա վիճակը և բարելավմանն ուղղված գործողությունները, խոչընդոտները, ինչպես նաև հետագա զարգացմանը միտված նախաձեռնությունները և մտադրությունները: Այն մշակված է ինչպես հաստատության գործունեության յուրաքանչյուր տիրույթն ամբողջապես գնահատելու, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրը մանրազննին ուսումնասիրելու համար: Որակի շրջանակը նաև որակի արտաքին ապահովման գործընթացների հիմքն է: Նկատի ունենալով, որ կրթական ծառայությունների ողջ շարքն ընդգրկում է բազմաթիվ բաղադրիչներ, առանձնացվել են հետևյալ գլխավոր տիրույթները.

- **Ինստիտուցիոնալ կարողություն:** Ինստիտուցիոնալ կարողությունը նկարագրում է ուսանողներին կայուն ու բարձրորակ ծառայություններ մատուցելու բաղադրիչները:
- **Կրթական ծրագրեր:** Կրթական ծրագրերի ճկունությունը, համապատասխանությունն արդի շուկայական պահանջներին բարենպաստ նախապայմաններ է ստեղծում հարափոփոխ միջավայրում գործելու ունակ մասնագետներ պատրաստելու համար: Դրանով իսկ կրթական ծրագրերի նախագծման, մշտադիտարկման, հաստատման և գնահատման գործում ձեռնարկված հստակ քայլերը կարևոր նշանակություն ունեն կրթական որակյալ պայմաններ ձևավորելու համար:
- **Գիտելիքի կառավարում:** Գիտելիքի կառավարումն ուղղված է գիտելիք ձևավորելու գործընթացի արդյունավետությանն ու հուսալիությանը, ինչպես նաև զարգացմանը և կիրառելիության ապահովմանը: Այն նաև ընդգրկում է

հաստատության կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքները և ուսումնական ծրագրի հետ դրանց կապակցումը:

- **Ուսանողակենտրոն մոտեցում:** Կրթության զանգվածային բնույթը ենթադրում է, որ շրջանավարտները պետք է կարողանան գործունեություն ծավալել հարափոփոխ միջավայրում և ունենան փոխանցելի հմտություններ: Այսպիսի ուղղվածության արդյունքներն առավել արդյունավետ են լինում, երբ ուսանողներն ու դասախոսներն աշխատում են ներդաշնակորեն՝ համագործակցային մթնոլորտում, ուսանողներն ուսումնառության ընթացքում օժտված են լինում ավելի մեծ ինքնուրույնությամբ ու ճկունությամբ: Արդյունքում՝ ուսանողների մոտ ձևավորվում են գիտելիք ձեռք բերելու հմտություններ, ինչն էլ օգնում է նրանց սովորել ամբողջ կյանքի ընթացքում: Այդօրինակ մոտեցման պարագայում փոխվում է նաև դասախոսի դերակատարությունը՝ նրա գլխավոր նպատակն է դառնում ուսանողների կրթական գործողություններն ուղղորդելու, գիտելիքի յուրացման և կոմպետենցիաների ձեռքբերման գործընթացը կառավարելու գործառույթի իրականացումը:
- **Տեղեկատվության կառավարում:** Տեղեկատվության ճիշտ կառավարումը վերաբերում է տարբեր մակարդակներում (ներբուհական, ազգային և միջազգային) կատարվող փոփոխությունների վերաբերյալ հիմնավորված և նորացվող տեղեկությունների հավաքագրմանը, վերլուծությանն ու տարածմանը: Հարկ է նշել, որ գործընթացի արդյունավետության համար կարևոր նշանակություն ունի թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:
- **Ֆինանսավորում:** Ֆինանսավորման մեխանիզմները կարևոր նշանակություն ունեն որակյալ կրթության ապահովման գործում՝ անհատների ու հասարակության համար մատչելի կրթություն ապահովելու համար համապատասխան ռեսուրսներ ձևավորելով, ինչպես նաև հեռանկարներ ստեղծելով ինստիտուցիոնալ զարգացման համար:
- **Որակի մշակույթ:** Որակը էապես կախված է կրթական հաստատություններում ձևավորված մշակույթից, որը ենթադրում է վերլուծական գործունեություն, թափանցիկություն և շարունակական բարելավում: Ուստի Որակի կենտրոնը կարևորում է որակի ներքին ապահովման կայուն մեխանիզմներ ապահովող որակի մշակույթի դերը, ինչպես նաև ուսումնառության որակը:

Հավաստելու համար, որ կրթական ծառայություններն օժանդակում են արդյունավետ ուսումնառության համար հարմար պայմաններ ստեղծելուն, առանձնացված տիրույթներից յուրաքանչյուրը չափելու համար Որակի կենտրոնը նախատեսել է 6 դիտանկյուն (առանցք):

- **Ընդունելիություն:** Կրթական գործընթացին ուսանողների համագործակցային և ակտիվ մասնակցության հնարավորությունն է՝ ինստիտուցիոնալ կարողությունների և կրթական ծրագրերի շրջանակներում: Այլ շահեկիցների մասնակցությունը գործընթացին կնպաստի կրթական ծառայությունների ընդունելիության մա-

կարդակի բարձրացմանն այն դեպքերում, երբ այդ գործընթացները բավարարում կամ գերազանցում են սահմանված չափորոշիչները:

- **Հասանելիություն:** Կրթական ծառայությունները պետք է բխեն բոլոր ուսանողների պահանջներից՝ անկախ աշխարհագրական դիրքից, սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ռասայական պատկանելությունից, տարիքից և սեռից: Այս ասպեկտը մատնանշում է, թե որքանով են կրթական ծառայությունները հասանելի շահառուներին՝ անկախ ուսուցման ձևից (հեռավար կրթություն, էլեկտրոնային ուսուցում), առանց խտրականությունների (ազգային պատկանելություն, տարիք, սոցիալ-տնտեսական կարգավիճակ և այլն): Այն ներառում է նաև որակի ապահովման խնդիրները:
- **Համապատասխանություն:** Այս դիտանկյունը վերաբերում է համապատասխան մասնագետների վերապատրաստումն ապահովելու համար նորացված մեթոդներ և տեխնոլոգիաներ կիրառելու անհրաժեշտությանը: Ակնկալվող արդյունքները պետք է համապատասխանեն սահմանված չափորոշիչներին և բավարարեն պահանջարկը՝ հնարավորինս խուսափելով բացասական հետևանքներից:
- **Արդյունավետություն:** Կրթական ծառայությունների շահառուներն ակնկալում են, որ ձեռք բերած կոմպետենցիաները, հմտություններն ու գիտելիքը չափելի շահույթ են բերելու: Կրթական ծառայությունների արդյունավետությունը բնորոշվում է այն բանով, թե որքանով են դասավանդման և ուսումնառության մոտեցումները հանգեցնում ցանկալի արդյունքների:
- **Գործունություն:** Այս դիտանկյունը նպատակ ունի բացահայտել, թե ռեսուրսներն արդյունավետ օգտագործելով՝ ինչպես հասնել ցանկալի արդյունքի: Դա հնարավոր է, եթե ռեսուրսները, ըստ մատուցվող ծառայությունների, ճիշտ բաշխվեն և ծախսերի կրճատման ու միջոցների խնայողության շնորհիվ նրանց օգտագործումը շահավետ դարձնեն ուսանողների համար:
- **Ուսանողի պաշտպանվածությունը:** Ցանկացած կրթական գործընթացի գլխավոր նպատակն է ուսանողի/օգտվողի պաշտպանվածությունը: Պետք է խուսափել կրթական գործընթացների ոչ ճիշտ կազմակերպման հետևանքով առաջացած բացթողումներից և հնարավոր ռիսկերից: Որակի և՛ արտաքին և՛ ներքին ապահովմանն ուղղված քաղաքականությունը պետք է պահպանի մասնագիտական կրթության համակարգում ընդունված չափորոշիչները, ապահովի կրթական գործընթացների որակը և շարունակական բարելավումը:

Որակի ապահովման շրջանակը

Հայաստանում մասնագիտական կրթության որակի ապահովման համար Որակի կենտրոնը մշակել է որակի ապահովման շրջանակ, որը նախատեսում է 6 մեխանիզմների առկայություն: Այդ մեխանիզմները գործում են Որակի կենտրոնի մշակած չափորոշիչների և չափանիշների համաձայն: Դրանց նպատակն է օգնել հաստատություններին, ինքնագնահատման արդյունքների վրա հիմնվելով, արժևորել իրենց

ինստիտուցիոնալ և ծրագրային կարողությունները և որոշել բարելավման ենթակա ոլորտները: Որակի կենտրոնի սահմանած չափանիշները, չափորոշիչներն ու կատարողական ցուցիչերը պարբերաբար վերանայվում են՝ երաշխավորելու համար, որ դրանք հուսալի են, արդիական և համապատասխանում են միջազգային հավատարմագրման և որակի ապահովման ոլորտում առկա վերջին միտումներին և զարգացումներին:

Այդ 6 մեխանիզմներն են.

- **Հավատարմագրում:** Ծրագրային հավատարմագրումը ենթադրում է մասնագիտական հաստատությունների կրթական ծրագրերի գնահատում՝ համաձայն ՈԱԱԿ-ի մշակած ծրագրային հավատարմագրման չափանիշների: Այդ չափանիշները սահմանում են նվազագույն պահանջներ, որոնք անհրաժեշտ են կրթական ծրագրի, վերջինիս իրականացմանն ու ստացված արդյունքների ուսումնասիրության համար:
- **Ատեստավորում:** ՈԱԱԿ-ի գործառույթներից է նաև ատեստավորումը, երբ ձեռք բերած արդյունքներին տրվում են քանակական գնահատականներ: Ատեստավորումն ուշադրությունը կենտրոնացնում է ուսանողի ձեռքբերած գիտելիքի մակարդակի վրա և կատարվում է ծրագրային հավատարմագրման հաջորդական փուլերի միջև: Որակի կենտրոնը նախատեսում է նաև կրթական ծրագրերի ատեստավորում: Այդ դեպքում ատեստավորումը կրթական ծրագրին որոշակի կարգավիճակ շնորհելու ամենակարևոր բաղադրիչներից է դառնում և պետք է լինի օբյեկտիվ ու թափանցիկ:
- **Որակի ներքին ապահովման մեխանիզմներ:** Կրթական հաստատությունները պետք է ունենան որակի ներքին ապահովման գործուն և շարունակական մեխանիզմներ: Օգտագործելով ինքնագնահատման արդյունքում ստացված տեղեկությունները՝ հաստատությունները պետք է խթանեն շարունակական բարելավումը և բարձրացնեն հաշվետվողականությունը, և հստակեցնեն պատասխանատվության մեխանիզմները: Որակի ներքին ապահովումը որակի արտաքին ապահովման հիմնական առանցքներից մեկն է:
- **Փորձաքննություն:** Հաստատություններում գործող որակի ներքին ապահովման մեխանիզմները գնահատում են դասավանդման և ուսումնառության, հետազոտական աշխատանքների և կրթական գործընթացում արտաքին շահեկիցների ներգրավման գործառույթների կատարման, որակի կառավարման ուղղությամբ հաստատության քաղաքականությունը, ռազմավարությունը և ռեսուրսները: Որակի կառավարումը ներառում է որակի հավաստումը, որակի ապահովումն ու բարելավումը, որակի մշտադիտարկումը և վերաբերում է իրականացվող բոլոր գործընթացներին և դրանց արդյունքներին:
- **Տեղեկատվության ապահովում:** Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության ոլորտին վերաբերող տեղեկությունները պետք է հասարակությանը հասանելի ու մատչելի լինի: Դա կապահովի կրթական գործընթացնե-

րի թափանցիկությունը:

- **Ճանաչում:** Երաշխավորելու համար, որ Որակի կենտրոնի մշակած որակի ապահովման գործառույթները իրավաչափ են և միջազգայնորեն ընդունելի, կենտրոնը պետք է միջազգային գործակալությունների կողմից ենթարկվի արտաքին ուսումնասիրության:

Կրթական ծրագրերի գրանցամատյանը

Կրթական ծրագրերի գրանցամատյանը պետության կողմից հաստատված գրանցամատյան է, որը պարունակում է տեղեկատվություն ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում պետության կողմից ճանաչված կրթական ծրագրերի մասին: ՀՀ Կառավարությունը պաշտոնապես ընդունում է միայն գրանցամատյանում գրանցված ծրագրերը: Միջազգային մակարդակում ընդունելի լինելու համար ՀՀ Կառավարության կողմից ճանաչված բոլոր կրթական ծրագրերը պետք է գրանցված լինեն գրանցամատյանում:

Որակի կենտրոնը պատասխանատվություն է կրում կրթական ծրագրերի կարգավիճակի մասին անկախ և ճշգրիտ տեղեկատվության համար: Գրանցամատյանում գրանցված գործող և նոր կրթական ծրագրերի մասին տվյալները թարմացվում և տարածվում են Որակի կենտրոնի զեկույցների միջոցով:

Գրանցամատյանում գրանցված բոլոր կրթական ծրագրերը ենթակա են պարբերական հավատարմագրման:

Գրանցամատյան ներմուծվող բոլոր տվյալները արխիվացվում են և հասանելի են հանրությանը:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԱԱԿ-Ի ՄՇԱԿԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Որակի կենտրոնի ստեղծման նպատակներից մեկը հասարակությունը ցածրակարգ կրթական ծառայություններից զերծ պահելն է, ինչպես նաև կրթության նկատմամբ հանրային վստահությունն ապահովելը՝ չափորոշիչներին բավարարելու երաշխավորված մեխանիզմների գործադրման միջոցով: Այդ մեխանիզմները հիմնված են հետևյալ սկզբունքների վրա:

- Գնահատման և որակի ապահովման գործընթացները պետք է շահեկիցների համար լինեն ընկալելի, հստակ ձևակերպված, արդյունավետ, կիրառելի և թափանցիկ:
- Որակի ապահովման չափանիշները պետք է համապատասխանեն նպատակներին, լինեն հստակ ու հրապարակային:
- Որակի ապահովման գործընթացները պետք է լինեն իրավաչափ, վստահելի և կիրառելի: Դրանց վերաբերյալ կայացրած որոշումները պետք է համապատասխանեն սահմանված չափանիշներին:

- Որակի կենտրոնը պատասխանատվություն է կրում կրթական ծառայությունների որակի հավաստման և որակի շարունակական բարելավման համար: Կրթության որակի ապահովման համար պատասխանատվություն կրում են մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք պետք է ապահովեն դրա համապատասխանությունը որակի ազգային և միջազգային շրջանակներին:
- ՈԱԱԿ-ի որակի ապահովման ծառայությունները պետք է մատչելի լինեն բոլոր այն հաստատությունների համար, որոնք ըստ օրենքի ենթակա են պարտադիր հավատարմագրման: Մնացած հաստատությունները կարող են օգտվել Որակի կենտրոնի ծառայություններից՝ ըստ ցանկության: Մեկ անգամ հավատարմագրման համար դիմելով՝ հաստատությունը պարտավոր է հետևել Որակի կենտրոնի մշակած կանոնակարգին: Հաստատությունները և կրթական ծրագրերը պետք է պարբերաբար ենթարկվեն որակի արտաքին ապահովման գործընթացներին:
- Որակի կենտրոնը նպաստում է մասնագիտական կրթական բոլոր հաստատություններում որակի մշակույթի հաստատմանը՝ որակյալ կրթության միջավայր ձևավորելով:
- Որակյալ կրթության միջավայրում ընդգրկվելը պահանջում է անդամակցության կարգավիճակ: Հաստատությունները կարող են դառնալ Որակի կենտրոնի ձևավորած միջավայրի անդամ (կստեղծվի կոնսորցիում կամ կազմակերպչական այլ ձև կընտրվի) միայն բոլոր անդամների համաձայնության դեպքում:

Որակի ապահովման հիմնական նպատակները

Որակի ապահովման գործընթացը՝ միջազգային հանրության առջև ՀՀ մասնագիտական կրթության որակի հավաստման հիմքն է: Որակի ապահովման գործընթացն իրականացվում է ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներով Որակի կենտրոնի՝ մասնագիտական հաստատությունից անկախ մարմնի կողմից: Որակի կենտրոնի կողմից իրականացվող գործընթացները հենվում են հաստատության կողմից պարբերաբար կատարվող ներքին գնահատումների վրա, որոնք ներկայացնում են, թե որքանո՞վ են տվյալ մասնագիտական հաստատությունը և/կամ նրա կրթական ծրագրերը համապատասխանում ակնկալվող արդյունքներին:

Որակի ապահովումը ծառայում է երկու հիմնական նպատակի՝

- **ապահովել հաշվետվողականություն և թափանցիկություն.** որակի ապահովման գործընթացները հանդիսանում են այն հիմնական մեխանիզմը, որի միջոցով հանրությունը կարող է հավաստիանալ, որ մասնագիտական կրթության որակը և սահմանված չափորոշիչները պատշաճ կերպով պահպանվում են: Այդ մեխանիզմը թափանցիկ է դարձնում առանձին

մասնագիտական հաստատությունների որակն ազգային և միջազգային մակարդակներում:

- **կատարել որակի բարելավում**. այն հնարավորություն է ընձեռում անդրադառնալ հաստատությունում իրականացվող որակի ապահովման գործընթացների բնույթին և արդյունավետությանը ու հասկանալ՝ արդյո՞ք դրանք նպաստում են շարունակական զարգացմանը և հաստատությունում որակի մշակույթի ձևավորմանը:

Որակի արտաքին ապահովումը

Որակի արտաքին ապահովման նպատակն է խթանել որակի մշակույթի զարգացումը, ինչը կնպաստի որակյալ, այսինքն՝ հասարակության վստահությունը վայելող մասնագիտական կրթության հասնելուն և կօժանդակի ուսանողի անհատական զարգացմանն ու ձեռքբերումներին: Դա էլ, իր հերթին, կհանգեցնի կենսաձևի, մշակույթի և ազգային տնտեսության որակի շարունակական բարելավմանը:

Որակի արտաքին ապահովումը պարբերաբար իրականացվող գործընթաց է, որը նպատակաուղղված է հաստատության գործունեության մասին անկախ տեղեկատվություն ապահովելուն և հաստատության կողմից որակյալ կրթություն տրամադրելու կարողությունը հավաստելուն: Վերոնշյալ տեղեկատվությունը արտահայտվում է որոշակի չափանիշներով, որոնց միջոցով գնահատվում է երկու հիմնական տիրույթ՝

- **Ինստիտուցիոնալ կարողություն,** որն արտահայտում է, թե որքանո՞վ է հաստատությունն օգտագործում ինքնագնահատման արդյունքներն իր գործունեությունը վերլուծելու համար և շարունակական բարելավում իրականացնելու նպատակով հաշվի առնում դրանք: Ինստիտուցիոնալ կարողությունը հաշվետվողականության և բարելավումների համար պատասխանատվություն ստանձնելու հաստատության ունակությունն է:
- **Կրթական գործունեություն,** որն արտահայտում է, թե որքանո՞վ են արժևորվում մասնագիտական հաստատության առաջարկած որակավորումները ուսանողների և հասարակության համար:

Այսպիսով՝ որակի արտաքին ապահովումը շահեկիցների առջև հաստատության հաշվետու լինելու բաղադրիչներից է, ինչպես նաև մի մեխանիզմ է, որը կխթանի որակի ներքին ապահովումը և բարելավումը մասնագիտական կրթության ոլորտում:

Այս նպատակների իրագործման համար Որակի կենտրոնը մշակել է որակի ապահովման ամբողջական մի համակարգ, որն ունի երկու բաղադրիչ՝

- **Որակի շրջանակ,** որը ներառում է որակի գաղափարը, տիրույթները՝ ուսումնական հաստատությունում կրթության որակի վրա ազդեցություն

ունեցող առկա բաղադրիչները, հիմնական դիտանկյունները (առանցքները), որոնք ցույց են տալիս, թե որքանո՞վ է ուսումնական հաստատությունը ապահովում որակը յուրաքանչյուր տիրույթում, ինչպես նաև չափելիության և գնահատման գործիքները:

- **Որակի ապահովման շրջանակ,** որը ներառում է որակի ապահովման ընթացակարգերը և քաղաքականությունը: Այդ մեխանիզմները ներառում են հավատարմագրման, փորձաքննության և գնահատման գործընթացները, սակայն չեն սահմանափակվում միայն դրանցով:

Որակի ներքին ապահովումը

Կրթության որակն ապահովելու համար հաստատությունը պետք է վստահեցնի, որ ունի քաղաքականություն, ընթացակարգեր և մեխանիզմներ, որոնք նպատակաուղղված են ապահովելու և բարելավելու կրթության որակը: Հետևաբար, հաստատությունները պետք է ստեղծեն մի ենթակառուցվածք, որը պատասխանատվություն կկրի կրթության որակի ապահովման համար: Որակի ներքին ապահովման գլխավոր բաղադիրիչները հետևյալներն են.

- *Հաստատությունները պետք է ունենան որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, իրենց կրթական ծրագրերին և շնորհող որակավորումներին համապատասխան չափորոշիչներ*: Նրանք պետք է նաև օժանդակեն այնպիսի մշակույթի զարգացմանը, որը կարևորում է որակը և որակի ապահովումը: Այդ նպատակին հասնելու համար հաստատությունները պետք է մշակեն և իրագործեն կրթության որակը պարբերաբար բարելավելու ռազմավարություն: Ռազմավարությունը, քաղաքականությունն ու ընթացակարգերը պետք է ունենան պաշտոնական կարգավիճակ և հասարակությանը մատչելի լինեն: Դրանք պետք է հաշվի առնեն նաև ուսանողների և այլ շահեկիցների դերն ու պահանջները:
- *Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատում, մշտադիտարկում և պարբերական ուսումնասիրություն:* Հաստատությունները պետք է մշակեն մեխանիզմներ իրենց կողմից շնորհվող դիպլոմների և կրթական ծրագրերի հաստատման, մշտադիտարկման և պարբերական ուսումնասիրության համար:
- *Ուսանողների գնահատում:* Ուսանողներին պետք է գնահատել՝ համաձայն հրապարակված և շարունակաբար կիրառվող չափանիշների, կանոնակարգերի ու ընթացակարգերի:
- *Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում:* Հաստատությունները պետք է միջոցներ ունենան երաշխավորելու, որ ուսումնական գործընթացներում ներգրավված դասախոսական կազմն ունի համապատասխան որակավորում և ունակ է կրթելու ուսանողներին այդ

որակավորման պահանջներին համաձայն: Այդ տեղեկությունները պետք է մատչելի լինեն արտաքին ուսումնասիրողների համար և անհրաժեշտ մեկնաբանություններով ներկայացվեն որակի ապահովման գործընթացների ամփոփիչ զեկույցներում:

- *Ուսումնական ռեսուրսներ և աջակցություն ուսանողներին:* Հաստատությունները պետք է երաշխավորեն, որ ուսուցման համար մատչելի ռեսուրսները բավարարում են առաջարկվող յուրաքանչյուր կրթական ծրագրի պահանջները:
- *Տեղեկատվական համակարգեր:* Հաստատությունները պետք է երաշխավորեն, որ իրենք հավաքում են համապատասխան տեղեկություններ, վերլուծում և օգտագործում են դրանք՝ կրթական ծրագրերի և գործընթացների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
- *Հանրային իրազեկում:* Հաստատությունները պետք է պարբերաբար հրապարակեն նորացված, անկողմնակալ և օբյեկտիվ տեղեկություններ իրենց կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին:

Համադրական վերլուծությունը որպես ինքնագնահատման մեթոդ

Ընդհանուր առմամբ նախընտրելի է, որ հաստատությանն ապահովի կրթության որակը և ինքնագնահատման միջոցով այն շարունակաբար բարելավի: Այս մոտեցումը համարվում է առավել ընդունելի: Ինքնագնահատումը կարող է իրականացվել համադրական վերլուծության (benchmarking) միջոցով, որի արդյունքում սահմանվում են ներդրումները, գործընթացները և արդյունքները չափելու և կարգավորվելու համար ընդունելի չափորոշիչներ: Համադրական վերլուծությունը հնարավորություն է տալիս հաստատությանը հայտնաբերել իր բացթողումները և մշակել ռազմավարություն՝ հետագա բարելավումների համար:

Համադրական վերլուծությունը ներառում է՝

- հաստատության ներքին գործունեության ուսումնասիրում և քննարկում,
- ուսումնասիրվող ոլորտներում «լավագույն փորձի» օրինակների որոնում այլ հաստատություններում,
- այդ փորձի կիրառում տվյալ հաստատությունում՝ հետագա բարելավումների նպատակով:

Այսպիսով, համադրական վերլուծությունը՝ մյուսներից սովորելու, լավագույնն ընդօրինակելու և բարեփոխելու մի գործընթաց է, որը տրամադրում է նաև հաստատության գործունեությունը վերլուծելու և գնահատելու միջոցներ:

Որակի արտաքին ապահովման գործընթացներում հաստատության ներգրավվելու անհրաժեշտությունը

ՀՀ օրենսդրության համաձայն՝ հավատարմագրման և գնահատման գործընթացների միջոցով որակյալ կրթության հավաստումը ճանաչված է որպես բարձրագույն և միջին մասնագիտական կրթության ոլորտի ուսումնասիրման ամենաարդյունավետ միջոցներից մեկը: Այս շրջանակում բոլոր պետական կրթական հաստատություններն, ինչպես նաև ոչ պետական բժշկական հաստատությունները պարտավոր են պարբերաբար մասնակցել հավատարմագրման գործընթացներին, մինչդեռ ոչ պետական հաստատությունների և նրանց կրթական ծրագրերի հավատարմագրումը կարող է կատարվել՝ ըստ ցանկության:

Որակի կենտրոնը պատասխանատվություն է ստանձնել պաշտպանել հասարակությանն ընդունելի չափանիշներից ցածր կրթությունից: ՈԱԱԿ-ը պետք է հասարակության շրջանում վստահություն առաջացնի տվյալ կրթական հաստատության նկատմամբ և երաշխավորի հաստատության ճանաչումը՝ չափորոշիչների պահանջների պահպանումը հավաստելու միջոցով: Որակի կենտրոնը նաև պետք է հավաստի, որ կրթական հաստատությունը շարունակում է բավարարել Կառավարության սահմանած չափորոշիչներին և չափանիշներին՝ նաև հավատարմագիրը ստանալուց հետո: Որակի կենտրոնի քաղաքականության և չափանիշների համաձայն, որակի ապահովման ընթացիկ գործընթացը պետք է իրականացվի՝ հիմնվելով հաստատության ինքնագնահատման, արտաքին գնահատման և պարբերական ուսումնասիրությունների վրա: Այդ ուսումնասիրությունները կերաշխավորեն հասարակությանը կրթական ծրագրերի վավերականությունը, գործունությունն ու ճանաչումը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում: (Տես՝ Որակի ապահովման շրջանակ, Ճանաչում)

Որակի ապահովման գործընթացներում ներգրավված լինելու շահավետությունը

Բացի օրենքով սահմանված պարտավորություններից, որակի ապահովման գործընթացների մեջ ներգրավված հաստատությունը կարող է ակնկալել.

- կրթական գործընթացների որակի ապահովում և բարելավում,
- մրցունակություն և՛ ազգային, և՛ միջազգային մակարդակներում,
- շնորհվող կրեդիտների վավերականություն և ճանաչում ազգային և միջազգային մակարդակներում,
- ֆինանսական աջակցության հնարավորություններ,
- ձեռք բերած որակավորումների կիրառելիություն և՛ ակադեմիական, և՛ մասնագիտական ոլորտներում և, հետևաբար, շրջանավարտների բարձր աշխատունակություն,
- կրթական գործընթացի թափանցիկություն և միջազգային համեմատելիություն,

- զարգացման հեռանկարներ:

Փորձաքննությունը

Մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովումը մի գործընթաց է, որի նպատակն է ապահովել և բարձրացնել կրթության որակը: Այն վերաբերում է, օրինակ՝ հետազոտական աշխատանքներին, տարբեր տեսակի ուսումնասիրություններին, գնահատման եղանակներին, ուսանողների ընդունելության և աշխատակազմի համալրման գործընթացներին և ներառում է տարբեր մեխանիզմներ ու համակարգեր: Որակի կենտրոնի նախաձեռնած անկախ փորձաքննության նպատակն է խթանել կրթական ծառայությունների զարգացումը և շարունակական բարելավումը:

Որակի կենտրոնի կողմից իրականացվող որակի փորձաքննությունը ստուգում է, թե որքանո՞վ է հաստատությունը իրագործում իր նպատակները և որքանո՞վ է կենտրոնանում դասավանդման և ուսումնառության որակի ապահովմանն ու բարելավմանն ուղղված գործընթացների արդյունավետության վրա: Որակի փորձաքննությունը երեք մասից բաղկացած գործընթաց է, որը ստուգում է.

- որակի ապահովման համար պլանավորված գործընթացների համապատասխանությունը՝ սահմանված նպատակներին,
- որակի ապահովման գործընթացների համաձայնեցվածությունը՝ աշխատանքային պլանի հետ,
- սահմանված նպատակներին հասնելու համար իրականացվող գործողությունների արդյունավետությունը:

Անցումային շրջանում Որակի կենտրոնը նախաձեռնել է մի շարք գործողություններ, որոնք պետք է համակարգեն տարբեր շահեկիցների կատարած նորամուծությունները և նպաստեն դրանց իրականացմանը բոլոր հաստատություններում:

Հաշվի առնելով Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում որակի ներքին ապահովման նոր մեխանիզմների ներդրնելու, ինչպես նաև դրանք ներկայացնելու անհրաժեշտությունը՝ Որակի կենտրոնը առաջարկում է անցկացնել հաստատությունների և կրթական ծրագրերի զարգացմանը նպաստող փորձաքննություն, որը հիմք կծառայի 3 տարի տևողությամբ անցումային շրջանում որակի ներքին ապահովման մեխանիզմ ունենալու համար: Անցումային շրջանի հաջող ավարտից և հաստատություններում որակի ներքին ապահովման մեխանիզմ ստեղծելուց հետո Որակի կենտրոնը կանցնի որակի ներքին ապահովման մեխանիզմների արտաքին փորձաքննության գործընթացին:

Զարգացմանը նպաստող փորձաքննության առավելությունը նաև հաստատություններում որակի մշակույթ ձևավորելն է և հավաստելը, որ

հաստատություններն ու կրթական ծրագրերը պատրաստ են գնահատման ու հավատարմագրման: Հիմնվելով այդ փորձաքննության արդյունքների վրա՝ Որակի կենտրոնը կպատրաստի առաջարկությունների փաթեթ՝ փոփոխությունների և բարելավումների համար: Դրանում կներառվեն նաև Հայաստանի և Եվրոպայի լավագույն փորձի օրինակներ:

Ենթակառուցվածքային փորձաքննությունը

Ենթակառուցվաքային փորձաքննությունը հաստատության ինստիտուցիոնալ գործընթացների գնահատումն է, որը հիմնված է սահմանված չափանիշների և չափորոշիչների վրա:

Ենթակառուցվաքային փորձաքննությունը սովորաբար հիմնված է գնահատման այնպիսի սկզբունքների վրա, որոնցով որոշվում է, թե արդյո՞ք հաստատությունը բավարարում է նվազագույն չափանիշները, օրինակ՝աշխատակազմի որակավորման, հետազոտական աշխատանքների կատարման, ուսանողների ընդունելության նկատմամբ առկա պահանջներ, ուսումնական ռեսուրսների առումով: Այն կարող է հիմնված լինել նաև հաստատության՝ կրթական չափորոշիչներին բավարարող և համապատասխան մասնագիտական հմտություններով օժտված շրջանավարտներ պատրաստելու ներուժի գնահատման վրա:

Ենթակառուցվաքային փորձաքննությունը սովորաբար վերաբերում է ամբողջ հաստատությանը, ընդ որում, հաստատության յուրաքանչյուր ստորաբաժանում իր ներդրումն ունի հաստատության նպատակների իրագործման գործընթացներում՝ ոչ միշտ ապահովելով որակի միևնույն մակարդակը:

ՈԱԱԿ-ը ենթակառուցվաքային փորձաքննությամբ որոշում է, թե ինչքանո՞վ է հաստատությունը բավարարում որակի չափորոշիչներին և կատարում տվյալ մասնագիտական ուսումնական հաստատության գնահատում: Մասնագիտական հաստատության փորձաքննության չափանիշները տարբերակվում են՝ բուհի կողմից մատուցվող կրթության առանձնահատկություններից ելնելով:

- Ենթակառուցվաքային փորձաքննությունը 6 տարի ժամկետով պարբերաբար իրականացվող գործընթաց է, որի թիրախը կրթական միջավայրն է: Անցումային ժամանակաշրջանում ծրագրային հավատարմագրման համար այն գլխավոր նախապայմանն է:
- Ենթակառուցվածքային փորձաքննության բացասական արդյունքի դեպքում հաստատության առաջարկած կրթական ծրագրերը ենթարկվում են հավատարմագրման գործընթացներին ուղեկցող մանրակրկիտ ուսումնասիրությունների, որոնք ներառում են Որակի կենտրոնի սահմանած Որակի շրջանակի բոլոր տիրույթները:

- Անցումային ժամանակաշրջանից հետո ենթակառուցվաքային փորձաքննությունն իրականացվում է՝ ըստ ցանկության:
- Այն կրթական ծրագրերը, որոնք իրականացնող ուսումնական հաստատությունները ցանկանում են շրջանցել ենթակառուցվածքային փորձաքննությունը, պետք է անցնեն ծրագրային մանրազնին հավատարմագրում:
- Եթե կրթական ծրագիրն իրականացնող ուսումնական հաստատությունը ցանկանում է անցնել ենթակառուցվածքային փորձաքննություն, ապա այդ հաստատության կրթական ծրագրերը անցնում են միայն սահմանափակ (թեմատիկ) ծրագրային հավատարմագրում:
- Որպես կանոն հավատարմագրման կարգավիճակ ստանալ ցանկացող բոլոր կրթական ծրագրերի հավատարմագրումն իրականացվում է ենթակառուցվածքային փորձաքննության գործընթաց անցած հաստատությունում:
- Ենթակառուցվածքային փորձաքննությունը կրեդիտների ճանաչման և փոխանցման նախապայմանն է:

Հավատարմագրումը

Հավատարմագրումը հաստատում է, որ ուսումնական հաստատությունը պահպանում է այն չափորոշիչները, որոնք անհրաժեշտ են ուսանողին այլ հավատարմագրված ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու կամ մասնագիտական ոլորտում գործունեություն ծավալելու համար: Հավատարմագիրը տրվում է որոշակի ժամկետով և երաշխավորում, որ այդ ժամկետում հաստատությունը կամ կրթական ծրագիրը կարող են ապահովել որակյալ կրթություն:

Հավատարմագրման նպատակն է երաշխավորել, որ հաստատության կողմից տրամադրած կրթությունը համապատասխանում է որակի ընդունված չափանիշներին: Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական համակարգում ընդունված են կրթական ծրագրերի հավատարմագրման հետևյալ 2 տեսակները՝

- **Հավատարմագրում:** Հավատարմագրման այս տեսակն ընդգրկում է գործող կրթական ծրագրերը: Այն շնորհվում է տարբեր շրջափուլերի կրթական ծրագրերին՝ հիմնվելով ուսումնառության արդյունքների և այն ուսումնասիրությունների վրա, որոնք վերահաստատում են պահանջվող որակավորումներին դրանց համապատասխանությունը:
- **Նախնական հավատարմագրում՝ նոր բացված և դեռևս շրջանավարտ չտված կրթական ծրագրերի հավատարմագրում:** Հավատարմագրման այս տեսակի դրական արդյունքի դեպքում նորաստեղծ կրթական ծրագիրը գրանցվում է

Գրանցամատյանում:

Ծրագրային հավատարմագրումը

Ծրագրային հավատարմագրումը հաստատում է կրթական ծրագրի ակադեմիական կարգավիճակը և որոշում մասնագիտական կարողություններով օժտված շրջանավարտներ պատրաստելու դրա հնարավորությունները գործնական կիրառության ոլորտներում: Հավատարմագրման այս տեսակը հաճախ կոչվում է նաև մասնագիտական հավատարմագրում: Այս դեպքում հավատարմագրվում է հաստատության ստորաբաժանումը կամ կրթական ծրագիրը:

Աստիճան շնորհող կրթական ծրագրի հավատարմագրման արդյունքում այդ ծրագրին տրվում է հավատարմագիր: Այդ հավատարմագիրը կարող է օգտագործվել կրթական ծրագրից և նրա առանձին բաղադրիչներից օգտվողների՝ հասարակության, ուսանողների ու ապագա ուսանողների, գործատուների, Կառավարության մարմինների կողմից՝ կրթական ծրագրի որակը գնահատելու համար, ինչպես նաև որոշելու, թե որքանով է կրթական ծրագիրն իրագործում իր նպատակները և համապատասխանում կրթական չափորոշիչներին: Ծրագրի հավատարմագրման գործընթացը խթանում է նաև ուսումնական հաստատության ինքնագնահատումը, ամրապնդում կապը կրթական ծրագրերի բաղադրիչների՝ ծրագրի բովանդակության, դասավանդման մեթոդների, ուսումնառության արդյունքների միջև և նպաստում կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը՝ լավագույն փորձի ուսումնասիրության միջոցով:

Որակի կենտրոնը պահանջում է, որ կրթական ծրագիրը հավատարմագրվի ենթակառուցվածքային փորձաքննություն անցած հաստատությունում, քանի որ ենթակառուցվածքային փորձաքննությունը կրեդիտների ճանաչման և փոխանցման նախապայմանն է:

Կլաստերային հավատարմագրումը

Կլաստերային հավատարմագրումը ենթադրում է մի շարք իրար հետ առնչվող կրթական ծրագրերի համաժամանակյա հավատարմագրում՝ միևնույն փորձագետների խմբի կողմից: Կլաստերային հավատարմագրումը՝

- հնարավորություն է ընձեռում գնահատման միջոցով համեմատել տարբեր կրթական հաստատությունների կողմից առաջարկած նմանատիպ կրթական ծրագրերը,
- նպաստում է համադրական վերլուծության արդյուքում նվազագույն չափանիշների սահմանմանը՝ գնահատման գործընթացը դարձնելով օբյեկտիվ ու թափանցիկ,

- թույլ է տալիս ընդհանուր ծախսեր կատարել մի քանի ծրագրերի հավատարմագրման համար:

Համապարփակ ծրագրային հավատարմագրումը

Համապարփակ ծրագրային հավատարմագրումը ենթադրում է մեկ ծրագրի հավատարմագրման միջոցով բոլոր տիրույթների գնահատում՝ ինչպես կրթական ծրագրերի համար, այնպես էլ ինստիտուցիոնալ մակարդակով: Այդ գործընթացը իրականացվում է ամեն անգամ, երբ հաստատությունը դիմում է ծրագրային հավատարմագրման համար: Նման հավատարմագրման դիմելով՝ հաստատությունն այլևս չի անցնում ենթակառուցվածքային հավատարմագրում: Այնուամենայնիվ, հաստատությունն ամեն անգամ ծրագրային հավատարմագրման դիմելիս՝ պետք է հոգա համապարփակ ծրագրային հավատարմագրման համար նախատեսված բոլոր ծախսերը:

Սահմանափակ ծրագրային հավատարմագրումը

Սահմանափակ ծրագրային հավատարմագրումը ենթադրում է կրթական ծրագրերին վերաբերող տիրույթների գնահատում, օրինակ՝ ըստ թեմատիկ ուղղվածության՝ թողնելով հաստատության գործունեության տիրույթների գնահատումն առանձին անցկացվող ենթակառուցվածքային փորձաքննությանը: Ենթակառուցվածքային փորձաքննության դրական արդյունքի դեպքում հաստատության առաջարկած բոլոր կրթական ծրագրերն անցնում են միայն սահմանափակ ծրագրային հավատարմագրում: Այդ դեպքում հաստատությունը հոգում է միայն սահմանափակ ծրագրային հավատարմագրման համար նախատեսված ծախսերը: Ենթակառուցվածքային փորձաքննության բացասական արդյունքի դեպքում իրականացվում է ծավալուն ծրագրային հավատարմագրում:

Հավատարմագրման ընթացակարգը

Կրթական ծրագիրը, որը ցանկանում է հավատարմագրվել, պետք է անցնի հավատարմագրման գործընթացի մի քանի փուլ:

Դիմում: Հավատարմագրման համար դիմած բուհը կամ կրթական ծրագիր իրականացնողը լրացված դիմումն ուղարկում է Որակի կենտրոն: Դիմումի համաձայն՝ Որակի կենտրոնը նախապատրաստրաստվում է տվյալ հաստատության կամ կրթական ծրագրի հավատարմագրմանը և պայմանագիր է կնքում այդ կազմակերպության հետ:

Նախապատրաստում և ինքնագնահատում: Հավատարմագրվելիք կրթական ծրագրերի համար պատասխանատու անձինք պատրաստում են նյութեր, որոնք

պետք է արտացոլեն տվյալ ծրագրի գործառությունը և ներկայացնեն գնահատման ենթակա գործունեության ոլորտների որակը: Կրթական ծրագրի համար պետք է նաև ներկայացնել ծրագրի գործառության մասին գրավոր զեկույց՝ համաձայն Որակի կենտրոնի սահմանած չափանիշների:

Փոխգնահատում: Զեկույցը ներկայացնելուց հետո կատարվում է կրթական ծրագրի վերաբերյալ պատրաստված նյութերի փոխգնահատում, որը պարտադիր գործընթաց չէ: Վարչական և դասախոսական կազմի ներկայացուցիչներն ուսումնասիրում են պատրաստված նյութերը, գրավոր զեկույցը և հավատարմագրվելիք կրթական ծրագրի ընդհանուր բնութագիրը: Փոխգնահատում անցկացնող խմբերն այցելում են հաստատություն: Այդ խմբերում ընդգրկվում են տվյալ բնագավառի վարչական և դասախոսական կազմի ներկայացուցիչներ:

Այց և հետազոտություն: Գործընթացների ավարտին Որակի կենտրոնը որոշում է կայացնում, թե տվյալ կրթական ծրագրին շնորհվելու է հավատարմագրում, թե՝ ոչ: Փոխգնահատողների կատարած այցից բացի, կրթական ծրագրի հավատարմագրման նպատակով, Որակի կենտրոնը կազմում է փորձագետների խումբ՝ հաստատություն այց կատարելու համար: Այդ խումբը սովորաբար կազմվում է Որակի կենտրոնի կողմից վերապատրաստված և համապատասխան որակավորումներ ունեցող փորձագետներից և շահեկիցներից, որոնք շահագրգռված են պահպանել մասնագիտական կրթական հաստատությունների կրթական ծրագրերի որակի չափորոշիչները:

Որակի կենտրոնի եզրակացություն: Երբ վերոնշյալ բոլոր քայլերը կատարված են, Որակի կենտրոնը դիմում է հավատարմագրող խորհրդին՝ այդ քայլերին համապատասխանող գործառույթներն ուսումնասիրելու և տվյալ կրթական ծրագրին հավատարմագիր շնորհելու կամ հավատարմագրումը մերժելու համար:

Հաստատում: Որակի կենտրոնի ղեկավար մարմինը հաստատում է հավատարմագրման մասին որոշումը և վերջնական զեկույցում ներառված խորհուրդները: Դրանից անմիջապես հետո Որակի կենտրոնը կրթական ծրագրերի կարգավիճակի հստակեցման համար առաջարկում է համապատասխան փոփոխություններ կատարել Գրանցամատյանում:

Զեկույցի հրապարակում: Վերջնական զեկույցը և Որակի կենտրոնի առաջարկած խորհրդատվական փաթեթը հաստատվելուց հետո հրապարակվում են:

Շարունակական ուսումնասիրություն: Ստանալով հավատարմագրման որոշակի կարգավիճակ՝ կրթական ծրագիր իրականացնողը համաձայնում է պարբերաբար ենթարկվել ուսումնասիրության: Նրանցից սովորաբար պահանջվում է յուրաքանչյուր ուսումնասիրության ժամանակ կատարել հավատարմագրման համար անհրաժեշտ բոլոր քայլերը: Շարունակական ուսումնասիրության նպատակն է երաշխավորել, որ հավատարմագրված կրթական ծրագիրը շարունակում է ապահովել հավատարմագրման համար անհրաժեշտ չափորոշիչները և բարելավել

այդ չափորոշիչներին համապատասխանելու պայմանները: Հավատարմագրման հետ մեկտեղ կրթական ծրագրերի գնահատումը և ենթակառուցվածքային փորձաքննությունը նպատակաուղղված են բարելավելու տվյալ հաստատության կամ կրթական ծրագրի որակը:

Փորձագետների այցի ընթացակարգը

Այցի ժամանակ փորձագետների խմբի նպատակն է պարզել, թե արդյո՞ք ինքնագնահատումը հիմնված է իրական փաստերի վրա ու ինչպե՞ս է կազմակերպությունը մեկնաբանում և օգտագործում ինքնագնահատման արդյունքում ստացված տեղեկությունները: Ինքնագնահատումից և համապատասխան այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հավաստիությունը պետք է ստուգվի: Այդ տեղեկությունները ստացվում են հետևյալ աղբյուրներից՝

- ուսումնասիրությունների զեկույցներ, ժողովների գրառումներ, արձանագրություններ,
- հարցազրույցներ հաստատութան ղեկավար մարմինների, աշխատակազմի, ուսանողների, գործատուների և այլ շահագրգիռ կողմերի հետ,
- շահեկիցներից կազմված թիրախային խմբեր,
- հարցաշարեր,
- հետազոտություններ:

Եթե ինքնագնատումը թերի է և չի համապատասխանում չափորոշիչներին, ապա փորձագետների խումբն ուսումնասիրում է դրանց սկզբնաղբյուրները:

Գնահատման առարկան

Որակի կենտրոնի մշակած գնահատման չափանիշները ձևավորում են այն շրջանակը, որը հաստատության ինքնագնահատման հիմք է կազմում՝ թե՛ ինստիտուցիոնալ և ծրագրային գնահատման, թե՛ բարելավման ենթակա ոլորտները որոշելու համար:

Գնահատումն իրականացվում է 7 տիրույթների հիման վրա, որոնց միջոցով որակը գնահատվում է և հավաստվում: Այդ տիրույթներն են՝

- Ինստիտուցիոնալ կարողություն
- Կրթական ծրագրեր
- Ուսանողներ
- Գիտելիքի կառավարում
- Տեղեկատվության կառավարում
- Ֆինանսավորում

- Որակի մշակույթ

Յուրաքանչյուր տիրույթի համար առկա են Որակի կենտրոնի սահմանած չափորոշիչները և գնահատման չափանիշները: Հավատարմագրվելիք կրթական ծրագիրը պետք է բավարարի այդ չափանիշներին: Եթե կրթական ծրագիրը բավարարում է սահմանված բոլոր չափանիշներին, ապա այն հավատարմագրվում է:

Հիմնվելով գնահատման արդյունքների վրա՝ կատարվում է յուրաքանչյուր չափորոշիչի, բաղադրիչի և, հետևաբար, ամբողջ տիրույթի վերլուծություն: Այդ վերլուծության համար ելակետային են համարվում Որակի կենտրոնի առաջարկած որակի 6 դիտանկյունները (առանցքները՝ ընդունելիություն, հասանելիություն, համապատասխանություն, արդյունավետություն, գործունություն, շահառուների պաշտպանվածություն):

Սահմանված չափորոշիչներին հասնելու համար ընտրվել են մեթոդներ, որոնք ուշադրություն են դարձնում՝

- կրթական գործընթացներում ներդրումների, դրանց իրականացման և արդյուքների փոխներգործության ընթացքում որակի կորստի չափին,
- այն մեխանիզմներին, որոնց օգնությամբ կորուստը հասցվում է նվազագույնի,
- յուրաքանչյուր տիրույթին հավասարակշռված մոտեցում ցուցաբերելուն:

Գնահատման սանդղակը

Հիմնվելով տիրույթի վերլուծության արդյունքների վրա՝ և՛ հաստատությունը, և՛ կրթական ծրագիրը գնահատվում են 5 միավորանոց սանդղակով: Գնահատման սանդղակն է՝

- **Գերազանց (5): Հ**աստատությունը և կրթական ծրագիրը ցուցաբերում են բարձր մրցունակություն՝ միջազգային մակարդակով և զգալի ներդրումներ կատարում կրթական ոլորտում: Նրանց գործունեությունը կարևոր և նշանակալից ազդեցություն ունի կրթական ամբողջ դաշտի վրա: Փորձագիտական խմբի կատարած ուսումնասիրությունները հավաստում են հաստատության գործառույթների բարձր մակարդակը՝ գնահատվող բոլոր տիրույթներում:
- **Լավ (4)**: Հաստատությունը/կրթական ծրագիրը միջազգային կրթական ասպարեզում որոշակի գործունեություն է ծավալում: Գործունեության արդյունքներն ազգային մակարդակով ունեն կարևոր և էական ազդեցություն մասնագիտական ոլորտի վրա: Փորձագիտական խմբի կատարած ուսումնասիրությունները հավաստում են հաստատության գործառույթների բարձր մակարդակը՝ գնահատվող բոլոր տիրույթներում՝ սահմանված չափորոշիչներից աննշան շեղումներով:
- **Բավարար (3)**: Հաստատության գործունեությունը և կրթական

ծրագիրն ազգային մակարդակով մրցունակ է և միջազգային մակարդակի հասնելու հեռանկարներ ունի: Կրթական գործընթացների արդյունքներն ազգային մակարդակով մասնագիտական ոլորտում ունեն կարևոր և էական ազդեցություն: Փորձագիտական խմբի կատարած ուսումնասիրությունները հավաստում են հաստատության գործառույթների միջին մակարդակը՝ գնահատվող բոլոր տիրույթներում՝ սահմանված չափորոշիչներից որոշակի շեղումներով:

- **Անբավարար (2):** Հաստատությունը/կրթական ծրագիրը մեկուսացված է և օժանդակության կարիք ունի: Այս դեպքում ուսումնական հաստատությունը էական ներդրում չունի իր երկրի զարգացման մեջ և հետևաբար արժանի չէ ուշադրության: Ի տարբերություն վերը նշված դեպքերի, հաստատության գործունեության արդյունքները մասնագիտական ոլորտում ունեն ավելի թույլ ազդեցություն: Փորձագիտական խմբի կատարած ուսումնասիրությունները հավաստում են հաստատության գործառույթների ցածր մակարդակը՝ գնահատվող բոլոր տիրույթներում՝սահմանված չափորոշիչներից զգալի շեղումներով:
- **Շատ վատ (1):** Հաստատության գործունեությունը և կրթական ծրագիրն ուշադրության արժանի չեն և աջակցության կարիք չունեն: Ուսումնական հաստատությունը բացարձակապես ներդրում չունի երկրի զարգացման գործում: Փորձագիտական խմբի կատարած ուսումնասիրությունները հավաստում են հաստատության գործառույթների անբավարար մակարդակը՝ գնահատվող բոլոր տիրույթներում՝ սահմանված չափորոշիչներից զգալի շեղումներով:

Վերջնական գնահատականը ձևավորվում է փորձագետների ամփոփումների արդյունքում:

Որակի կենտրոնի սահմանած չափանիշները, չափորոշիչներն ու կատարողականի ցուցիչները պարբերաբար վերանայվում են՝ երաշխավորելու համար, որ դրանք վավեր են, արդիական և համապատասխանում են միջազգային հավատարմագրման և որակի ապահովման ոլորտում առկա վերջին միտումներին և զարգացումներին:

Հավատարմագրման գործընթացի արդյունքները

Հավատարմագրման կարգավիճակը տրվում է հավատարմագրում իրականացնող մարմնի որոշմամբ: Հաստատությունը և/կամ կրթական ծրագիրը, որը դիմել է Որակի կենտրոնին գնահատման նպատակով և համապատասխանում է նրա սահմանած չափորոշիչներին, ստանում է *հավատարմագիր*:

Կրթական ծրագիրը սկզբունքորեն կարող է հավատարմագրվել, կամ՝ ոչ: Հավատարմագրման նպատակով Որակի կենտրոնի կազմակերպած այցի արդյունքում հաստատությանը կամ կրթական ծրագրին կարող է շնորհվել հետևյալ կարգավիճակներից որևէ մեկը:

- **Հավատարմագրված:** Այս որոշումը կայացվում է հավատարմագրման հանձնաժողովի զեկույցի հիման վրա: Այստեղ նշվում է հավատարմագրման ժամկետը և ներկայացվում գրավոր զեկույց վերջին երեք տարիների ընթացքում հաստատության ունեցած հաջողությունների մասին՝ հավաստելով, որ
    - հաստատության/կրթական ծրագրի աշխատանքային պլաններում ընդգրկված են բարելավման ենթակա ոլորտները,
    - առկա է առաջընթաց հաստատության/կրթական ծրագրի աշխատանքային պլանների կատարման գործընթացներում,
    - բարձրացել է ուսանողների առաջադիմությունը՝ համաձայն կրթական ծրագրերից ակնկալվող ուսումնառության արդյունքների:
- **Չհավատարմագրված:**
    - Եթե կրթական ծրագիրը հիմնականում չի բավարարում սահմանած նվազագույն չափորոշիչներին և եթե այդ իրավիճակը չի կարող շտկվել ընդունելի ժամկետներում, ապա կրթական ծրագրի կարգավիճակը վտանգի տակ է հայտնվում: Կրթական ծրագիրը չի ստանում հավատարմագրում, իսկ հաստատությանը չի թույլատրվում այդ կրթական ծրագրով նոր ընդունելություն կատարել և նա ստիպված է լինում կասեցնել այն: Որոշ դեպքերում ուսանողներին հնարավորություն է ընձեռվում ավարտել ուսումը՝ տեղափոխվելով Որակի կենտրոնի կողմից հավատարմագրված նույն կրթական ծրագիրն իրականացնող մեկ այլ ուսումնական հաստատություն:
- **Ժամանակավոր ճանաչում ստացած** (1 կամ 2 տարի ժամկետով): Հավատարմագրման մերժում ստանալուց հետո 10 օրվա ընթացքում հաստատությունը/կրթական ծրագիրը կարող է դիմել ժամանակավոր ճանաչում ստանալու համար: Սա ժամանակավոր կարգավիճակ է՝ 1-2 տարի ժամկետով, որի վեցերորդ ամսվա ավարտին հաստատությունը գրավոր զեկույց է ներկայացնում հաշվետու ժամանակահատվածում տեղի ունեցած զարգացումների մասին: Այնուհետև կրկին այցելություն է կազմակերպվում հաստատություն, որի նպատակը կրկնակի ստուգումներն են: Որակի կենտրոնի խորհուրդներին խստորեն չհետևելու և անհրաժեշտ բարելավում չկատարելու դեպքում հաստատությանը հավատարմագրում չի շնորհվում: Վերոնշյալ զեկույցն ու կրկնակի այցելությունը հաստատում են, որ
    - ✓ հաստատության/կրթական ծրագրի աշխատանքային պլաններում ընդգրկված են բարելավման ենթակա ոլորտները,

- ✓ առկա է առաջընթաց հաստատության/կրթական ծրագրի աշխատանքային պլանների կատարման գործընթացներում,
- ✓ բարձրացել է ուսանողների առաջադիմությունը՝ համաձայն կրթական ծրագրերից ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Ժամանակավոր ճանաչման առավելագույն ժամկետը 2 տարի է: Եթե երկրորդ տարվա ավարտին հաստատությունը հավատարմագրման հանձնաժողովի կողմից չի ստանում եռամյա ժամկետով հավատարմագրման կարգավիճակ, ապա հաստատությանը ընդհանրապես մերժվում է հավատարմագրման կարգավիճակի շնորհումը և առաջարկվում է կատարել հաստատության/կրթական ծրագրի վերակարգավորում կամ իրականացնել կառավարության կողմից նախանշված բարեփոխումները:

Որակի ապահովման գործընթացների ժամկետները

Որակի կենտրոնը որակի ապահովման յուրաքանչյուր գործընթացի համար սահմանել է հետևյալ ժամկետները:

Որակի ապահովման գործընթացներ	**Ժամկետը**	**Կարգավիճակը**
Ենթակառուցվածքային փորձաքննություն	**6 տարի**	**Երաշխավորված կրթական միջավայր**
Կրթական ծրագրերի հավատարմագրում • **Բակալավր** • **Մագիստրոս**	 • **4 տարի** • **2 տարի**	**Երաշխավորված կրթական միջավայր**
Կրթական ծրագրերի ատեստավորում	**2 տարի**	**Երաշխավորված ուսունառության արդյունքներ**

Վերջնական զեկույցի կառուցվածքը

Վերջնական զեկույցը բաղկացած է երկու մասից՝

- մանրամասն զեկույց, որը կներայացնի փորձագետների խմբի կարծիքը, հիմնական արդյունքները, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնց հիման վրա կատարվել են եզրակացությունները: Այդ եզրակացությունները պետք է ներկայացվեն՝ ըստ Որակի կենտրոնի մշակած դասակարգումների:

- Խորհրդատվություններ (երաշխավորություններ)

Զեկույցի հրապարակումը

Վերջնական որոշում կայացնելուց հետո փորձագիտական խմբի զեկույցը՝ Որակի կենտրոնի խորհուրդների հետ մեկտեղ, հրապարակվում է մինչ վերջնական հաստատման համար ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնելը:

Գնահատումը

Կրթական ծրագրի գնահատումը գլխավորապես հիմնված է ուսանողների ձեռք բերած ուսումնառության արդյունքները գնահատելու վրա: Գնահատման արդյունքներն արտահայտվում են քանակական գնահատականներով, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսինն են ուսանողների ձեռք բերած կոմպետենցիաները: Այս գործընթացները կենտրոնանում են ձեռքբերված գիտելիքի մակարդակի գնահատման վրա և իրականացվում են որոշակի ժամկետներում: Իր գործունեության ընթացքում Որակի կենտրոնը նախատեսում է կրթական ծրագրերի գնահատում, որը ծրագրին կարգավիճակ շնորհելու գործընթացներում բարձր գերակայություն ունեցող բաղադրիչներից մեկն է և պետք է կատարվի օբյեկտիվ ու թափանցիկ:

Կրթական ծրագրի արտաքին գնահատումն իրականացնում է Որակի կենտրոնը՝ հետևյալ երկու սկզբունքների համաձայն՝

- որպես կրթական ծրագրի հավատարմագրման անբաժանելի մաս,
- որպես առանձին գործընթաց, եթե ստորաբաժանումը շահագրգռված է իր շարունակական բարելավման և զարգացման գործում:

Որակի կենտրոնի կատարած գնահատման արդյունքներն օգտագործվում են կրթական ծրագրերի հավատարմագրման համար: Այդ մեխանիզմը կիրառվում է երկու տարին մեկ և կենտրոնանում է ամբողջ կրթական ծրագրի վրա:

Կրթական ծրագրի գնահատման նպատակն է՝

- որոշել այն տիրույթը, որի շրջանակներում ուսանողները կարող են ներկայացնել տվյալ ծրագրով սովորելու ընթացքում ձեռք բերած կոմպետենցիաները,
- վերլուծել և նկարագրել ծրագրի ուսումնառության արդյունքները կամ նպատակների իրականացումը: Կրթական ծրագրի գնահատման հիմնական նպատակն է դասախոսներին տրամադրել այնպիսի տեղեկատվություններ ու տվյալներ, որոնք անհրաժեշտ են երաշխավորելու համար իրենց ծրագրերի համապատասխանությունը՝ տարբեր շահեկիցների խմբերի պահանջներին,
- պատասխանել այն հիմնական հարցերին, թե արդյո՞ք կրթական ծրագիրը ուսանողին տալիս է այնպիսի գիտելիք, որն անհրաժեշտ է նրան, կամ արդյո՞ք

ուսանողը տիրապետում է անհրաժեշտ գիտելիքի: Կրթական ծրագրերի գնահատումը ներառում է բազմաբնույթ գործընթացներ, օրինակ՝ շրջանավարտների և գործատուների հարցումներ, ուսանողների անձնական գործերի փաթեթի (պորտֆոլիո) ուսումնասիրություններ:

- որոշել, թե որքանով է կրթական ծրագիրը բավարարում արտաքին շահեկիցների պահանջները: Տարբեր ծրագրերի գնահատման արդյունքներն ընդհանրացվում են և հաճախ համեմատվում տարբեր տեսանկյուններից:

Գնահատման հաջորդականությունը

1. **Գնահատման պլան:** Յուրաքանչյուր հաստատություն կամ ստորաբաժանում նախքան իր կրթական ծրագրերի գնահատումն իրականացնելը մշակում է աշխատանքային պլան: Սա մի փաստաթուղթ է, որտեղ նշվում են կրթական ծրագրի վերջնարդյունքները և նպատակները, դրանց իրագործումը գնահատելու ուղղակի և անուղղակի մեթոդները, գնահատման մեթոդների համառոտ բովանդակությունը, յուրաքանչյուր մեթոդով գնահատվող ուսումնառության արդյունքի(ների)/նպատակների սահմանումները, ապացույցների հավաքման և ուսումնասիրման գործընթացների պատասխանատուները և ժամկետները:
2. **Կրթական ծրագրի ինքնագնահատում:** Կրթական ծրագրի վերաբերյալ ֆակուլտետի (օրինակ՝ դեկանատի) կողմից տեղեկություններ են հավաքագրվում՝ ուսանողների ձեռք բերած կոմպետենցիաները կամ կրթական ծրագրի նպատակների իրագործումը վերլուծելու և նկարագրելու նպատակով: Կրթական ծրագրերի ինքնագնահատման հիմնական նպատակն է ցույց տալ, որ ֆակուլտետն ունի այն տվյալներն ու տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են շահեկիցների տարբեր խմբերի պահանջներին կրթական ծրագրերի համապատասխանությունը երաշխավորելու համար:
3. **Կրթական ծրագրի փոխգնահատում:** Սա առարկայական ուղղության հեղինակավոր գործընկերների համագործակցությամբ իրականացվող մի գործընթաց է, որի նպատակն է ի մի բերել նրանց կարծիքներն ու եզրակացություններն՝ կրթական ծրագրերի որակի գնահատման և բարելավման հեռանկարների վերաբերյալ: Այս գործընթացում ներգրավվում են ուսանողներ, ֆակուլտետի աշխատակիցներ, տվյալ մասնագիտական ոլորտի հետ առնչվող մասնագետներ՝ այլ հաստատություններից:
4. **Այց:** Փորձագիտական խմբի այց ուսումնական հաստատություն, որի ընթացքում ուսումնասիրվում և վերլուծվում են ինքնագնահատման գործընթացների արդյունքում հավաքագրված տեղեկությունները:

5. **Եզրակացություններ:** Հասանելի ողջ տեղեկությունների վերլուծության արդյունքների ամփոփում, որից հետո եզրակացություններ են կատարվում կրթական ծրագրերի որակի վերաբերյալ և տրվում խորհուրդներ՝ այն բարելավելու համար:
6. **Հետագա գործընթացները** երաշխավորում են, որ ծրագիրը կստանա համապատասխան աջակցություն՝ իր արդյունքները հետագայում ուսումնասիրության ենթարկելու ցանկություն հայտնելու դեպքում: Այցի օրվանից մեկ ամսվա ընթացքում արտաքին և ներքին ուսումնասիրողները պատրաստում են համատեղ մի զեկույց, որտեղ ներկայացվում են կրթական ծրագրի թույլ և ուժեղ կողմերը և խորհրուրդներ տրվում հնարավոր բարեփոխումներ կատարելու վերաբերյալ: Ուսումնասիրողների զեկույցը ներկայացնելուց հետո 6 ամսվա ընթացքում կրթական ծրագիրն իրականացնող ֆակուլտետը ներկայացնում է պատասխան գրավոր զեկույց, որտեղ նշվում են խորհուրդների կատարմանն ուղղված բոլոր գործողությունները:
7. **Հետադարձ կապի ապահովում:** Գնահատման գործընթացներին բնորոշ է նաև հետադարձ կապի ապահովումը, որը թույլ է տալիս բոլոր եզրակացություններն ու հետագա գործողությունները ներառել գնահատման պլանի մեջ և հետևել վերոնշյալ քայլերի հաջորդականությանը:

Փորձագետների խմբի այցին հաջորդող 6 ամսվա ընթացքում ֆակուլտետի դեկանի գումարած ժողովում քննարկվում է ուսումնասիրողների զեկույցին ի պատասխան ներկայացվող ֆակուլտետի զեկույցը: Այդ ժողովին պետք է հրավիրվեն հաստատության վարչակազմի համապատասխան ներկայացուցիչները՝ հաստատության բոլոր անհրաժեշտ ռեսուրսները ծրագրերում կարևոր բարեփոխումներ կատարելու համար համախմբելու նպատակով:

Հաջորդ տարիներին բարեփոխման ենթակա յուրաքանչյուր ոլորտում կրթական ծրագրի առաջընթացին պետք է անդրադառնալ հաստատության տարեկան աշխատանքային պլանի և բյուջեի ուսումնասիրման ժամանակ:

Փորձագիտական խումբ

Որակի կենտրոնը ձևավորում է փորձագիտական խումբ՝ ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման համար դիմած հաստատություն այց կատարելու նպատակով: Այդ խումբը, որպես կանոն, կազմված է Որակի կենտրոնի կողմից իրենց վերապատրաստված փորձագետներից և շահեկիցներից, որոնք շահագրգռված են մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի չափորոշիչների պահպանմամբ:

Որակի կենտրոնը ձևավորում է հավատարմագրման հանձնաժողով՝ և սահմանում է գնահատում իրականացնող արտաքին փորձագետների ընտրության չափանիշները: Որակի կենտրոնն ինքն է առաջարկում փորձագիտական խմբի անդամների թեկնածներին, բացառությամբ՝ ուսանողության ներկայացուցիչների: Այնուամենայնիվ, հավատարմագրման հանձնաժողովն է պատասխանատվություն կրում առաջադրված թեկնածուներից հատուկ փորձագետների խմբի ձևավորման համար: Ուսանողների ներկայացուցիչներն առաջադրվում են ազգային ուսանողական կազմակերպություններից:

Հաստատություններին հնարավորություն է ընձեռվում իրենց կարծիքն արտահայտել խմբի կազմի վերաբերյալ՝ մինչ վերջնական որոշման կայացումը: Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար կազմվում են երկու հիմնական փորձագիտական խմբեր: Փորձագիտական երկու խմբերի փորձագետները պետք է ունենան ստորև ներկայացված կարողություններից առնվազն մեկը՝

- կրթական ծրագրի կամ ինստիտոցիոնալ գնահատման կարողություն,
- կրթական ծրագրի մշակման և մշտադիտարկում անցկացնելու կարողություն,
- քաղաքականության և ընթացակարգերի մշակման կարողություն,
- կրթության կառավարման կարողություն,
- որակի հավաստման կարողություն,
- գնահատման ենթակա մասնագիտական ոլորտին կամ համապատասխան այլ ոլորտներին տիրապետելու կարողություն:

Շահերի բախում

Որակի կենտրոնը մշակել է հավատարմագրման գործընթացում մասնակցելու համար առաջադրված փորձագետների՝ շահերի բախումից խուսափելու հստակ քաղաքականություն:

Փորձագիտական խմբի թեկնածուն կարող է ունենալ շահերի բախում, եթե նա

- որևէ կապ ունի ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման դիմած հաստատության հետ կամ այնտեղ որոշակի գործունեություն է ծավալում,
- ունի առկա կամ հնարավոր ֆինանսական կամ այլ շահեր, ինչը կխոչընդոտի կամ արդեն խոչընդոտում է Որակի կենտրոնի անունից անկախ և օբյեկտիվ որոշումների կայացումը: Օրինակ՝
    - Ֆինասնական կամ այլ տեսակի շահեր ունի Որակի կենտրոնի կողմից ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրում ակնկալող հաստատության հետ:
    - Հավատարմագրման գործընթացի մեջ գտնվող հաստատության/կրթական ծրագրի հետ ունի աշխատանքային պայմանագիր:

- Առանց հավատարմագրման հանձնաժողովի ղեկավարին տեղյակ պահելու փնտրում է աշխատանքի հնարավորություններ հավատարմագրման գործընթացում գտնվող հաստատության կամ կրթական ծրագրի շրջանակում:
- Հանդիսանում է ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման գործընթացում ներգրավված հաստատության սեփականատեր, կրթական ծրագրի պատասխանատու անձն է կամ այդ հաստատությունը ղեկավարող ընկերության բաժնետերը:
- Ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման գործընթացում ներգրավված հաստատության տնօրենն է կամ պաշտոնատար այլ անձ:

Եթե թեկնածուն համոզված չէ, թե արդյո՞ք կա շահերի բախում, ապա նա պետք է այդ մասին գրավոր ձևով տեղեկացնի հավատարմագրման հանձնաժողովի ղեկավարին, ով էլ համապատասխան որոշում կկայացնի:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

Անցումային ժամանակաշրջանի ընթացքում նախատեսվող քայլերը

Անցումային ժամանակաշրջան՝ մեկնարկ

Հաշվի առնելով, որ Հայաստանի որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ) ընդունվելու է 2010 թվականներին, բոլոր մասնագիտական կրթական ծրագրերը, որոնք առաջարկվում են Հայաստանում գործող ուսումնական հաստատությունների կողմից, պետք է համաձայնեցվեն ՈԱՇ-ի հետ՝ այն վավերացնելու մասին ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո: Համաձայնեցման գործընթացները ներառում են մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից շնորհվող որակավորումների համապատասխանեցումը ՈԱՇ-ին: Իսկ վերջինիս համապատասխանեցումը Եվրոպական որակավորումների շրջանակին պետք է լինի թափանցիկ և Որակի կենտրոնի կողմից որակի տեսանկյունից հավաստված:

Համապատասխանեցման գործընթացին նպաստելու համար Որակի կենտրոնը հավատարմագրման առաջին փուլի համար նախատեսել է հետևյալ քայլերը:

- Հավատարմագրման առաջին փուլը սկսել և՛ պետական, և՛ ոչ պետական հաստատություններում:
- Օգտվել ՈԱՇ-ից՝ շնորհվող աստիճանների համընթեռնելիությունը ապահովելու համար: Հաշվի առնելով այն, որ կրթական ծրագրերում առաջարկվող առարկայական բովանդակությունները, ընդհանուր առմամբ, ենթակա չեն զգալի փոփոխությունների, գնահատման համար

որպես հիմք ընդունել նմանատիպ կրթական ծրագրերի իրականացման լավագույն փորձի ուսումնասիրությունների արդյունքում կազմված մոդելները: Որակի կենտրոնը նախատեսում է միջազգային փորձագետների ակտիվ ներգրավում այս գործընթացներում:

- Առաջին փուլը սկսել ինստիտուցիոնալ փորձաքննությունից և դրա հաջողության դեպքում տվյալ հաստատությունում անցկացնել ծրագրային հավատարմագրում: Առաջին փուլը սկսել Գրանցամատյանում պետական ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող բոլոր ծրագրերը ներառելով և դրանց տալով ժամանակավոր ճանաչում ունեցող ծրագրերի կարգավիճակ: Դա, անկասկած, կհանգեցնի նրանց ներկա կարգավիճակի փոփոխմանը:
- Գրանցամատյանում ներառել Որակի կենտրոնի կողմից երաշխավորված գործող բոլոր պետական և ոչ պետական կրթական ծրագրերը:
- Սահմանել հավատարմագրման ժամկետներ ոչ պետական հաստատությունների այն կրթական ծրագրերի համար, որոնք ստացել են անժամկետ հավատարմագրում 2000-2005 թվականներին: Այս կրթական ծրագրերը նույնպես պետք է գրանցվեն Գրանցամատյանում՝ սահմանափակ ժամկետով հավատարմագրվածի կարգավիճակով:
- Ոչ պետական հաստատությունների առաջարկած կրթական ծրագրերը, որոնք չունեին հավատարմագրում, կարող են գրանցվել Գրանցամատյանում՝ Որակի կենտրոնի կողմից իրականացվող հավատարմագրման գործընթացի բոլոր փուլերն անցնելու և դրական գնահատական ստանալու դեպքում:
- Նորաստեղծ կրթական ծրագրերը կարող են գրանցվել Գրանցամատյանում միայն Որակի կենտրոնի նախնական հավատարմագրումն անցնելուց հետո:

Անցումային ժամանակաշրջանի ժամանակացույցը

Անցումային ժամանակաշրջանի նպատակներին հասնելու համար Որակի կենտրոնի որոշման հիման վրա սահմանվում է ժամանակացույց, որը բխում է ՀՀ կառավարության կողմից առաջ քաշած խնդիրներից:

- Անցումային ժամանակաշրջանի գործընթացների ժամանակացույցը կազմվում է հաստատության և Որակի կենտրոնի փոխհամաձայնության հիման վրա: Համաձայնագրում նշվում են երկու կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

- Երբ կրթական ծրագիրը գրանցվում է Գրանցամատյանում, Որակի կենտրոնը սկսում է կազմել ժամանակացույց, որը ներառում է հետևյալ գործընթացները՝
    - **կրթական ծրագրերի ատեստավորում** (նպատակը՝ ուսումնառության արդյունքների գնահատում)
        - Անցումային ժամանակաշրջանի առաջին երկու տարիների ընթացքում Գրանցամատյանում գրանցված բոլոր կրթական ծրագրերը պետք է ատեստավորվեն:
        - Ատեստավորման արդյունքները հաշվի են առնվում ենթակառուցվածքային փորձաքննության և ծրագրային հավատարմագրման ժամանակ և հիմք են ծառայում վերջնական գնահատման ու վերլուծության համար:
    - **Ենթակառուցվածքային փորձաքննություն** (նպատակը՝ պատշաճ կրթական միջավայրի երաշխավորում)
        - Ենթակառուցվածքային փորձաքննությունը կենտրոնանում է կրթական միջավայրի ուսումնասիրության վրա: Այն ծառայում է որպես նախապայման՝ անցումային ժամանակաշրջանում իրականացվող ծրագրային հավատարմագրման համար: Ենթակառուցվածքային փորձաքննության բացասական արդյունքի դեպքում հաստատության առաջարկած կրթական ծրագրերը կենթարկվեն համապարփակ ծրագրային հավատարմագրման:
        - Անցումային ժամանակաշրջանից հետո ենթակառուցվածքային փորձաքննությունը կիրականացվի՝ ըստ ցանկության:
        - Այն կրթական ծրագրերը, որոնք իրականացնող հաստատությունը ցանկանում է շրջանցել ենթակառուցվածքային փորձաքննությունը, ենթարկվում են *համապարփակ ծրագրային հավատարմագրման*: Եթե կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը ցանկություն է հայտնում անցնել ենթակառուցվածքային հավատարմագրում, այդ ծրագիրը ենթարկվում է միայն *սահմանափակ ծրագրային հավատարմագրման*:
    - **Ծրագրային հավատարմագրում**
        - Որակի կենտրոնը կիրականացնի կրթական ծրագրերի երկու տեսակի հավատարմագրում՝
            - ✓ նորաստեղծ կրթական ծրագրերի նախնական հավատարմագրում,

- ✓ գործող կրթական ծրագրերի հավատարմագրում:

- Որակի կենտրոնը պատասխանատվություն է կրում բոլոր գործընթացների թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև ստացվող տվյալները հասարակությանը հասանելի դարձնելու համար:

Որակի ապահովման գործընթացների ժամանակացույցը

Ամեն տարի հունվար ամսին Որակի կենտրոնը, ստացված դիմումների հիման վրա, որոշում է, թե ո՛ր կազմակերպություններն են հավատարմագրվելու հաջորդ տարվա ընթացքում: Մշակվում է ժամանակացույցի նախնական տարբերակ, որը ներառում է հավատարմագրման գործընթացների մեկնարկի, փորձագիտական խմբերի այցերի և գործընթացների ավարտի ժամկետները: Ցուցակում ներառված հաստատության հետ ճշտվում է այցի համար հարմար շաբաթը: Հաստատությունների վերջնական ցուցակը և հաջորդ տարի սկսվող հավատարմագրման ժամանակացույցը կտեղադրվի Որակի կենտրոնի կայքում՝ ապրիլ ամսին: Այսպիսով, յուրաքանչյուր հաստատություն, մինչ փորձագիտական խմբի այցը, կունենա առնվազն 8 ամիս ժամանակ:

Կազմվում է նաև կրթական ծրագրերի կլաստերային հավատարմագրման ժամանակացույցը:

Փորձագիտական խմբի այցի ճշգրիտ ժամկետները կհամաձայնեցվեն հաստատության հետ՝ հավատարմագրման մասին պայմանագիր կնքելիս: Հաստատությունների վերջնական ցուցակը և ժամանակացույցը հրապարակելուց հետո փոփոխություններ կատարվում են միայն բացառիկ դեպքերում: